

8041



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան



«18» 07 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 135 - 24

Նախաձեռնող՝

«Նյու էյջ քոնսթրաքշն» ՍՊԸ
ք. Երևան, Լենինգրադյան փողոց 19/11

Գործունեությունը՝

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան,
Լենինգրադյան փողոց հ. 19/11 հողամասում
բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցում:
ք. Երևան, Լենինգրադյան փողոց հ. 19/11 հողամաս

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 135 - 24

«18» հուլիսի 2024թ.

**Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի
Լենինգրադյան փողոց 19/11 հողամասում նախատեսվող բնակելի շենքի
կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության ՇՄԱԳ
հաշվետվություն**

Ձեռնարկող՝	«Նյու էյջ քոնսթրաքշն» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն/նախագիծ
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Մալաթիա- Սեբաստիա վարչական շրջան


Ներածական մաս. Ներկայացված հաշվետվությամբ բնակելի շենքերի նախագիծը նախատեսվում է իրականացնել Մալաթիա Սեբաստիա վարչական շրջանի Լենինգրադյան փողոց 19/11 հասցեում: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը, որպես քաղաքաշինության բնագավառ հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել գործունեության նախագծային փաստաթղթերը՝

- անշարժ գույքի վկայականը՝ N 22032024-01-0230, որտեղ՝ հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն

- ճարտարապետահատակագծային առաջադրանքը N 01/50-01-153-24

Նկարագրական մաս. Ըստ նախագծի Լենինգրադյան փող. 19/11 հողամասում նախատեսվում է իրականացնել թվով երկու բազմաֆունկցիոնալ բնակելի շենքերի կառուցապատում՝ 16 հարկ բարձրությամբ, յուրաքանչյուր շենքի ± 0.000 սիշի նկատմամբ, 17-րդ հարկը հանդիսանալու է տանիք և տեխնիկական հարկ:



Ստորագետնյա հարկերն ընդհանուր են և ծառայում են որպես կայանատեղի երկու շենքերի համար: Հողամասն ունի բավական կտրուկ ռելիեֆ ավելի քան 10մ, այդ պատճառով Բ մասնաշենքը Ա-ի նկատմամբ ավելի բարձրադիր է և ունի 5 ստորգետնյա հարկ, իսկ Ա մասնաշենքը՝ 4 ստորգետնյա հարկ: Հողամասի կտրուկ թեքության պատճառով առաջ են գալիս հենապատեր և աստիճաններ: Ըստ հատակագծային լուծումների յուրաքանչյուր շենքի առաջին 2 հարկերը հասարակական նշանակության են: Բ մասնաշենքում -1 կիսանկուղային հարկը ևս հասարակական նշանակության է, իսկ 3-րդ հարկից մինչև 16-րդ հարկերը երկու շենքերում բնակարաններ են: Բնակարանների ճնշող մեծամասնությունը 50 - 60 քմ մակերեսով, 1 ննջարանով բնակարաններ են, շենքերում նախատեսվում են նաև մինչև 100 քմ մակերեսով բնակարաններ: Երկու շենքերն էլ ունեն միևնույն ճարտարապետական լուծումները, յուրաքանչյուրի ± 0.000 նիշից վերև ճարտարապետական և հատակագծային լուծումներն ամբողջովին նույնն են: Տանիքը հարթ է, կազմակերպված ներքին ջրահեռացմամբ:

Նախագիծը մշակված է գործող քաղաքաշինական նորմերին համապատասխան: Համաձայն շինարարական նորմերի հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան սալիկապատված հարթ և թեք ճանապարհներ և միջոցառումներ դեպի բնակելի և հասարակական տարածքներ: Տեխնիկական ցուցանիշներ՝

- Հողամասերի մակերես 3550 քմ,
- Համալիրի վերգետնյա կառուցապատման մակերեսն է 1039.6քմ, իսկ կանաչապատման մակերեսը՝ 1420 քմ/ 40%
- Անջրանցիկ մակերես /հետիոտն և ավտոմոբիլային ուղիներ, հրապարակներ/ 1090.4 քմ 31 %/
- Բնակարանների քանակը 216 հատ է:

Շենքի բնակելի մասի միջանցքներից և ավտոկայանատեղերից իրականացվելու է ծխահեռացում: Ծխահեռացման օդամուղերը տեղակայված են լինելու տանիքի վրա: Հրդեհի ժամանակ վերելակների հորաններում և ավտոկայանատեղի վերելակների հորանի և աստիճանավանդակի նախասրահներում նախատեսված են դիմհարման համակարգեր: Հակահրդեհային օդամուղների գործարկումը կատարվում է հրդեհային ազդասարքից և հեռակենտրոնական վահանակից: Ավտոկայանատեղերում նախատեսված է ներածման և արտածման մեխանիկական համակարգեր: Արտածման համակարգերը համակցված են ծխահեռացման համակարգերի հետ: Ստորգետնյա ավտոկայանատեղերում յուրաքանչյուր հարկի համար օդափոխման համակարգը առանձին է: Օդափոխությունը իրականացված է վնասակար գազարտանետումների նստրացման և հեռացման համար:

Ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 1440 օր, շինարարական աշխատանքների կատարման համար թողնվում է



տրամադրման օրվանից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա մասնագիտացված բետոնաշաղախային հանգույցներից՝ տրանսպորտային միջոցներով: Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը: Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ եւ այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ եւ կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաեւ շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար:

Նախատեսվող գործունեության նախագիծը ենթադրում է նաև հիմքերի փորման աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 17500 մ³ ընդհանուր ծավալով փորման աշխատանքներ: Հանվող 17500 մ³ ծավալով զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր, հետլիցքի համար նախատեսված 3500 մ³-ը նորից հետ կբերվի շինհրապարակ: Շինհրապարակում հողային զանգված չի պահվելու:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում, կենցաղային աղբն է օրական 17.28 տ և շինարարական աղբն է 240 մ³ ծավալով: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

Պարճառաքանական մաս. Համալիրն ունի 1-ին կարգի սեյսմակայունություն և համապատասխանում է սահմանված բոլոր քաղաքաշինական չափանիշներին: Համալիրում նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ, որոնց արտաքին բյուրերը նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտագործմամբ նախատեսվում է ապահովել աղմուկի ցածր մակարդակ: Նախագիծը համապատասխանում է ՀՀ օրենսդրության և նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջներին:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս կտնկվեն ծառեր և թփեր: Համալիրի էներգաարդյունավետությունը նախատեսվում է համապատասխանեցնել կորոշիչներին: Կառավարության 12.04.2018թ. N426-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներին:



ինչի ուղղությամբ իրականացվելու են համալիր միջոցառումներ, որոնց թվում են երեսպատման համակարգը, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհաններ և վիտրաժներ, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացում:

Քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների կազմակերպման նպատակով նախագծվող կառույցների նկուղները նախատեսված են երկակի գործառնական նշանակությամբ՝ խաղաղ պայմաններում կծառայեն, որպես նկուղային տարածքներ, իսկ վերագրյալի դեպքում, որպես պարզագույն թաքստոց շենքի բնակիչների համար, որոնց դեպի թաքստոց ուղղորդումը կազմակերպվում է լուսային ցուցանակների (ՄՈՒՏՔ, ԵԼՔ) միջոցով:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝ փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի, բետոնային աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ:

Եզրափակիչ մաս. Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշման հավելվածի պահանջների՝ հանրային ծանուցումը և քննարկումները կատարվել են Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի նստավայրում: Հանրային քննարկումների նպատակն է հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի և ազդակիր հանրության կարծիքները, առարկություններն, առաջարկություններն և դիտողությունները նախատեսվող գործունեության վերաբերյալ: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, քաղաքաշինության կոմիտեն, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները:

Պարտադիր կատարման ենթակա պահանջներ

- Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը):

- Էլեկտրահաղորդման գծերում կիրառվող հաղորդալարերի և մալուխների թաղանթները և մեկուսացումը պետք է համապատասխանեցնել եղանակին և շրջապատող միջավայրի պայմաններին:

- Շինարարական աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային



ժամերին՝ տարածքում հնարավոր է գոյություն ունեցող կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար:

- Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն բոլոր արտադրական վտանգավոր օբյեկտները (կաթսայատուն, վերելակ և այլն) օրենքով սահմանված կարգով ներկայացնել տեխնիկական անվտանգության փորձաքննության:

- Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11 հոդվածով սահմանված պահանջները՝

Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով:

Շինարարության ընթացքում՝ ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով:

- Ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Լենինգրադյան փողոց 19/11 հասցեում նախատեսվող բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Իսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Շուշանիկ Կարապետյան